

ՄԵԼԷ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները մեջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелле“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գաղափարները չեն փոխվում: Ներքին տեղիքները: Նամակ Ալեքսանդրապոլից: Ներքին տեղիքները: Ուր տաք լինում են տեղիքները: «Голос» լրագրի թղթակցությունը հայերի մասին: Իշխան Բիսմարկի ծառը: Նամակ Թիֆլիսից: Արտաքին տեղիքները: Ցայտարարություններ: Տեղեկացույց: Բանասիրական: Ինչ վերաբերում է թիֆլիսյան պետք է տաճկական Հայաստանին:

ՄԵՐ ԳՍԻՍՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Մենք մի քանի անգամ յայտնել ենք, որ Երևանի օրիորդաց ուսումնարանի կից այդ ուսումնարանի տեսուչ Հայր Յ. Մելեանի աշխատությունները կառուցվել է մի դաշինք, որ մի և նոյն ժամանակ պետք է ուսումնարանի համար և կարող է թատրոնական դաշինք լինել:

Մի քանի ժամանակ արանից առաջ Հայր Մելեանը վճռել էր դաշինքին կցել մի բեմ և չընտելով հազար ու մեկ արգելքներն նա իրազորեց իր զիտաւորութիւնը և այժմ պատուելի Տօր շնորհիւ Երևանը ունի իր սեփական թատրոնական դաշինք գեղեցիկ բեմով:

Թիֆլիսը չունի մի տեղ, ուր հայ խումբը կարողանար մշտական ներկայացումներ տալ: Մեր գաղափարները նոյնպէս չունեն թատրոնական դաշինք և

բեմ, բացի Վերին-Եղուխից և Երևանից:

«Մշակ» № 160-ի մէջ տրված Երևանի նամակի մէջ բերված էր նամակագրի խօսակցութիւնը օրիորդաց զարգացի տեսուչ Հայր Մելեանի հետ: Երբ խօսակցութեանց երևում է, որ Հայր Մելեանը ծախսել է թատրոնական բեմի շինութեան վրա ուսումնարանապետական փողերը և պատուելի տեսուչը այժմ բաւական դժուար դրութեան մէջ է, որովհետեւ նրան փող է հարկաւոր ուսումնարանի զանազան ծախսերի համար և հասարակութիւնը չէ կամենում նրան օգնել, պատճառ բերելով, որ տեսուչը առանց ոչ ոքից խորհուրդ հարցնելու ծախսել է ուսումնարանի փողերը բեմի շինութեան վրա:

Մեզ զարմացնում է երևանցիների այսպիսի դատողութիւնը, այդպիսի վարմունքը: Հատ անգամ պատահում է, որ Երևանի հասարակական գործիչները շատ վատ են կատարում իրանց պարտաւորութիւնները: Հատ անգամ այդ գործիչները վատնում են հասարակական գումարները, երևանցիք այդպիսի վարմունքի վրա ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում, ընդհակառակը, երբ այդ պարսնները նրանց նորից դիմում են և նուիրատութիւն են խնդ-

րում, նոքա չեն խնայում իրանց կօպէկները, իսկ հայրը Մելեանցին Երևանի հարուստները չեն կամենում օգնել, որովհետեւ նա առանց ոչ ոքի խորհուրդը հարցնելու կատարել է մի գեղեցիկ գործ:

Չենք կասկածում, որ մեր Երևանի նամակագիրը ճշմարտութիւն է գրել և ցոյց է տուել երևանցիների տրամադրութիւնը դէպի այդ գործը: Ցաւում ենք, որ այդ անտարբեր հասարակութիւնը այդպէս է վերաբերվում դէպի թատրոնական գործը և մի և նոյն ժամանակ յայտնում ենք մեր համակրութիւնը Հայր Մելեանցին նրա կատարած գեղեցիկ գործի համար:

Հայ գաղափարները, Երևանն էլ նրանց հետ, շատ ուսումնարաններ ունեն, բայց թատրոնական դաշինք և բեմ միայն երկու տեղ կան՝ զրանցից մէկը հիմնվել է Հայր Մելեանցի աշխատութեամբ:

Հրաւիրում ենք Երևանի հասարակութիւնը թողնել կրքերը և խելացի կերպով նայել գործին: Հրաւիրում ենք նրան փոխանակ չնչին գործերի համար վիճելու, օգնութեան ձեռք մեկնել արժանապատիւ Հայր Մելեանցին և միջոց տալ նրան առաջ տանելու թէ օրիորդաց ուսումնարանի և

թէ հայ թատրոնի գործը: Թող միանգամայն հասկանան երևանցիները, որ թատրոնը նրանց համար նոյնքան անհրաժեշտ է, որքան ուսումնարանը, թող հասկանան որ ինչպէս ուսումնարանը կրթում է իր փոքր սաներին, նոյնպէս էլ թատրոնը կրթում է մեծ երեխաներին, իսկ այդպիսի կրթութեան կարօտ մեծ երեխաներ Երևանում չափազանց շատ են....

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Պատահամբ Ղարս գտնվելով իմ առաջին գործն եղա հետազոտել մեր ազգի դէպի նոր զարթոյնութիւն գնացող թշուառ երիտասարդութեան ողորմելի դրութիւնը, փոխանակ հետաքրքիր լինելու իրանց բարեբաղդ համարող, նիւթականապէս հարուստ, իսկ բարոյապէս աղքատ երիտասարդ վաճառականների և արհեստավորների կեանքին, որոնք գոցել գիշեր ցերեկ չապրութեան, քէֆերի և խաղերի մէջ գնեցողներում կամ հիւանդոցներում Բաքուի կենացը առատութեամբ կոնծելու ժամանակ, իրանց ամէն մի լաւ ու բարի ձգտումները թաղում են գինու բաժակների մէջ, իսկ զարթոյնում են միայն ամեն տեսակ ծաղրելի մոլութիւններով: Ուստի այդ ինձ անձանօթ քաղաքի կեղտոտ և ծուռ ու մուգ փողոցները, անկարգ ու անկանոն կերպով գետնոված տները, բազմաթիւ մէլիքների բարձր մինարեթները զինքից տաճիկ մօլանների արտակուսող եղանակով երգվող ազօթները, խորթ ու անսովոր բան թւում ինձ՝ վճռեցի մտնել մի արժարան, ուր մի բաժակ սուրճ պահանջելով, սկսեցի գնել այնտեղ գտնվող ամբոխը: Արժարանի մի անկուսում նստած էին մի քանի անձինք, որոնք տաք տաք վիճում էին իրանց գործերի և գլխաւորապէս նիւթական շահերի վրա, իսկ մի կող-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՏԱՃԻԿԱԿԱՆ ՀԱՅՍՏԱՆԻՆ

Եթէ ներկան անցեալի շարունակութիւնն է, եթէ ներկան ուղղելու համար պէտք է օգուտ քաղել անցեալից, այդ կէտից նայելով, մենք չենք սխալվի, եթէ ասենք՝ Կ. Պօլսի պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը» *), որ պարունակում է իր մէջ տաճկական Հայաստանի ամբողջ քաղաքի դարի գործերի արձանագրութիւնները, բաւական է առաջնորդ լինելու համար, թէ արդիւյի վերանորոգութիւններ պէտք է պահանջէ Կ. Պօլսի հայոց պատրիարքը, որպէս զի այսուհետեւ հայերի վիճակը ապահով լինի և նրանք ազատութիւն մինչև այսօր գործված անիրաւութիւններից:

Քննելով պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը», մենք գտնում ենք, որ նա բովանդակում է իր մէջ զխաւորապէս հետեւեալ չորս կէտերը. ա. անապահովութիւն ապրուստի և սեփականութեան, բ. անապահովութիւն կեանքի, գ. անար-

դարութիւն դատաստանի մէջ և իրաւունքի պաշտպանութեան, դ. անապահովութիւն ազգային առանձնութիւնների: Ուրեմն Տաճկաստանի հայերի վիճակը բարւոքելու համար գործ դրվելի վերանորոգութիւնները այն ժամանակ միայն կառող են նպատակադարձ, լինել, երբ լրակատար բաւականութիւն կը տան վերադիտել չորս կէտերի բարւոքմանը:

Խօսենք իւրաքանչիւրի վրա առանձին. ա. Մենք ապրուստի և սեփականութեան անպահովութիւն չենք համարում այն դէպքերը, որ հային հարստահարում են, նրա աշխատութեան արդիւնքը նրա ձեռքից խլում են, և նա մշտապէս ենթարկված է զանազան բռնաբարութիւնների և աւազակութիւնների, — ոչ, Տաճկաստանում սեփականութեան անապահովութիւնը և հետեւապէս ապրուստի դժուարութիւնը կայանում է գլխաւորապէս այն բանի մէջ, որ հայը հող չունի, այս պատճառով նա կեանքի հաստատուն հիւր չունի: Հողի վերաբերութեամբ մասնատակարար օրէնքը բովանդակվում է այս վարդապետութեան մէջ. «Ամբողջ տիեզերքը Աստուծոյն է պատկանում, սուրբանք Աստուծոյ խալիֆան կամ ներկայացուցիչն է երկրի վրա, իսկ հողը նրա սեփականութիւնն է»: Այստեղից առաջ է գալիս այն ծրագրելի անահաւատութիւնը, իւր

թէ ամեն մի երկիր, որի վրա ոտք է կոխում իսլամի թաղաւորը, պէտք է նրան պատկանի:

Հողի վերաբերութեամբ բոլոր կալուածական օրէնքները բխում են վերոյիշեալ վարդապետութիւնից. սուրբանք հողի տէրն է, իսկ երկրագործը, մշակ դասը — նրա վարձկանը կամ կապալառու: Հայը հող ունենալու համար պէտք է վարձէ կալուածարութիւնից, կամ տաճկական ասպետաւորութիւնից, — պէտք է թափուանէ. և այն օրից դադարում է նրա իրաւունքը իր վարձած հողի վրա, երբ օրէնքի պահանջած ժամանակներում չէ նորոգում իր կալուածագիրը, կամ չէ կատարում այս և այն պարտաւորութիւնները, իսկ միայնակի կալուածագիրը պայմանագրի գործիւն ունի, աւելի ոչինչ:

Այսպէսով ոչինչ չէ կապում երկրագործ դասի երկրի հետ, և հետեւապէս մշակութեան կամ աշխատութեան հետ: Եւ ի նկատի ունենով այն անտանելի պայմանները, որով ծանրաբեռնվում է մշակը մի կտոր հող վարելու համար, շատ հասկանալի է լինում, թէ ինչու նա թողնում է հայրենի երկիրը և հազարներով գաղթում է օտարութեան մէջ ապրուստ օրոնելու: Ուրեմն հային իր հայրենի երկրի հետ կապելու համար, զարթոյնութիւնը դադարեցնելու համար միակ և ամենակարեւոր միջոցն է նրան իրաւունք տալ ազատ կալուածածաէր լինելու, որ նա, որպէս սեփականութիւն, իր հողն

ունենայ և նրանից ամեն կերպով օգտվելու իրաւունք ունենայ: Դրանով կարելի է միայն հնար տալ գերազանց իր աշխատութեամբ իր ապրուստը հայթայթելու: Նա չը պիտի լինի վարձկալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի հաստատուն ժառանգութիւն, որ անցնում է սերունդից սերունդ, որը նա կարող լինէր գնել, վաճառել, գրաւ դնել, մի խօսքով, արդիւն նրա հետ որպէս իրան պատկանող սեփականութեան հետ: Սուր պէտք է լինի հայոց պատրիարքի պահանջելի գլխաւոր վերանորոգութիւններից մէկը, եթէ նա ցանկանում է, որ հայը արմատ ձգէ Հայաստանի հողի վրա, պէտք է նրա տէրը լինի, պէտք է նրանից ծծէ իր սնունդը, որպէս մանուկը մօր ստիճաններից: Իսկ ինչ որ վերաբերում է մուսլիմ գիւմերի (կապալառուների) հարստահարութիւններին, հարկերի ծանրութեամբ, որոնցով կողապղծվում է մշակ դասը, ինչ որ վերաբերվում է զանազան բռնակալների և տէրէրէրի երկրի կեղեցումներին, — մենք համարում ենք այդ բոլոր ժամանակակաւոր անկարգութիւնները, որոնցից ազատ չեն մնում նոյն իսկ մասնատակարարները, և որոնք Թիւրքիայի ընդհանուր բարեկորոգումների ժամանակ միայն կարող են կարգի և օրինաւորութեան մէջ դրվել:

Բ. Հայերի կեանքի անապահովութիւնը, քրդերից, չէրքէքներից և զանազան վայրենի

* Տես «Մշակ» № № 145—150 1878 թ.

Յ. Նազարեանց

ԼՈՅ

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՊԵԱՆՆԵՐ

— ԵՐԵՒԱՆ, Ա. Զ. Ռ. Նամա-
կը չենք տպի. Եթէ անպատճառ
կամենում էք շախատակցել, լու-
րեր հաղորդեցէք:

— ԱՆԽԱՂՑԻՍԱ. Գիտակ. Արդէն
սկսում էք պոլեմիկ չնչին հար-
ցերի պատճառով: Միթէ ճշմա-
րիտ են ասում, որ ինչտեղ եր-
կու հայ լինի, այնտեղ պէտք է
եւրեք կուսակցութիւն կազմի:
Գրեցէ՛ք օրական հարցերի մա-
սին:

— ԳԱՆՁԱԿ. Տեղացի. Այդ
հարցի վերաբերութեամբ բաւ-
կան շատ բան տպեցինք: Գրե-
ցէ՛ք մի ուրիշ բան:

— ԳԵՏԱՇԵՆ. Գ. Կ. Հայերը
առանց ձեռ արն ուռնի էլ շատ
ցաւեր տունն: Թողեցէ՛ք նրանց
հանգիստ, Թողէ՛ք ընդհանուր
հարցերը և այդտեղից լուրեր
հաղորդեցէ՛ք:

— ՄՍԱՎՐԱՊՈԼ. Գ. Թ. Ստա-
ցանք չորս բուբլ, կուղարկենք
«Մշակ» սեպտեմբերից: